



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Ս. Համբարձման տոնի առթիվ Ծիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Ծաբարյանը հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Կիրովականում: Հոգեպարար արարողության ընթացքում սրբազան հայրը հավատացյալների խոռոներում բազմությանը խոսեց հետևյալ քարոզը.

«Ելեալ ի յերկինս ևս մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր» («Հաւատամք»):

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Լրացել են հետ Հարության քառասուն օրերը, և ահա այսօր մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնն է:

Ձիթենյաց լեռան աննախադեպ իրադարձությամբ՝ Ս. Համբարձումով, Աստված, ըստ Պողոս առաքյալի, Հիսուս Քրիստոսով աշխարհը հաշտեցրեց Իր հետ (Բ Կորնթ. Ե 19). այդ արվեց որպէս շնորհ, քանզի եթէ Ս. Հարությունը հույսն է հավիտենական կյանքի, ապա Համբարձումը հաշտությունն է, քանի որ Աստված մարդուն ներեց նրա մեղքը:

Խորին խորհուրդ է Ս. Համբարձումը. Քրիստոս երկինք բարձրացավ և բազմեց Հայր Աստուծո աջ կողմում, որպէսզի դառնա մեր բարեխոսը: Երևույթը բացառիկ է, սակայն և իրական:

Մեր Տիրոջ Համբարձումը տեղի է ունեցել ի ներկայության առաքյալների, Երուսաղեմից ոչ հեռու, այժմ Համբարձման կոչվող լեռան վրա: Աշակերտները միամիտ հանդարտությամբ խորասուզվել էին իրենց մտքերի ու հիշողությունների մէջ՝ իրենց հայացքները դէպի Սողոմոնի տաճարը: Ահա, սակայն, դարձան վկաները Ս. Հրաշքի: Մեր Տերը նրանց արժանացրեց դառնալու առաջին վկաները Իր Համ-

բարձման: Դեռ հազիվ հանդարտվել էր իրենց նախորդ հուզումը, դեռ փորձում էին հասկանալ Տիրոջ և Վարդապետի հրաժեշտի խոսքերն ու հանձնարարություններն իմաստն ու բովանդակությունը, ահա գալիս էր գումարվելու ամենամեծը՝ անկարագրելի հրաշքը Համբարձման. տեսան, թե ինչպէս Քրիստոս հուշիկ բարձրանում է դէպի կապույտը, և թե ինչպէս քիչ անց, ամպը ծածկեց Աստվածորդուն: Հետո սպիտակի մեջ երկու հրեշտակներ եկան զորացնելու արձանացած երջանիկ վկաներին. «Ով գալիլիացիք, ի՞նչ եք այդպէս ապշած նայում երկինք. ձեր Վարդապետը, որ մեկնեց երկինք, կմնա այնտեղ. կգա սահմանված ժամանակ, հետո կիջնի երկիր մույն փառքով» (Գործք Ա 11): Ականատեսները հրաշքից հետո ուրախ երկրպագություն են մատուցում Աստծուն և քաղցր տպավորությամբ վերադառնում են Երուսաղեմ (Ղուկ. ԻԴ 50—52), որպէսզի հետո, ըստ խոստման, սպասեն գալիք Ս. Հոգու շնորհներին: Կամ որպէսզի ավելի հետո իրենց տեսածը հանձնեն աշխարհին՝ մեզ, որպէսզի մենք էլ միշտ մույն ոգևորությամբ մտովին և հոգեպէս բարձրանանք Ձիթենյաց լեռ, դառնանք հեռավոր վկաները Ս. Համբարձման:

Հայտնի է՝ Քրիստոս աշխարհից մեկնեց դարձյալ գալու համար, կգա, որ մենք ընդմիշտ Իր հետ լինենք, այնպէս, ինչպէս այդ Ինքն է Հոր մեջ (Հովհ. ԺԴ 20—26). «Ձեզ որք չեմ թողնելու, կգամ...»,—կարդում ենք Իր խոսքը Հովհաննո Ավետարանում,—Ես կենդանի եմ, և դուք կենդանի եք լինելու» (Հովհ. ԺԴ 18): Ի՞նչ երջանկություն, ի՞նչ շնորհ մեզ համար:

Այո՛, Քրիստոս Իր տնօրինության ա-

վարտին մեկնեց աշխարհից, մեկնեց մարդկային մեր բնությունն իր հետ և «Իր մեջ բնակվող աստվածության լեցունությամբ» (Կող. Ա. 18). այս թելադրությունները խթան են մեր հավատքի՝ հանդես հույսի և փրկության, խթան՝ մեր հավատարմության դեպի Համբարձյալը: Սակայն եթե չկան հավատարմություն և իրավ վստահություն Նրա նկատմամբ, ուրացումը և հուսահատությունը կպաշարեն մեզ, ուստի և «որովհետև, եթե ես չգնամ, Միսիթարիչը ձեզ մոտ չի գա. իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհ. ԺԶ 8), այսինքն թե Ս. Հոգին կուղարկվի իրեն և իր իսկ Ս. Համբարձումը ճշմարտապես ընդունողներին միայն:

Հետո չուշացավ գալուստը Ս. Հոգու՝ Քրիստոս Աստուծո և Հայր Աստուծո ներկայությունը, Ս. Երրորդության ներկայությունը՝ աշխարհում և մարդկանց հոգիներում՝ հաստատապես (Հովհ. ԺԴ 16, Եբր. Ա. 3):

Այսօր, այսպիսի նվիրական օր, ահա որն է մեզանից պահանջվողը՝ հատկապես խորհել որքան բարձր բաների, նույնքան և հարձրյալի մասին, իսկ երբ «Քրիստոս՝ ձեր կյանքը, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ կհայտնվեք փառքով» (Կող. Բ 4): Սրանով Ս. Պողոս նորից ուզում է ասել, թե մենք ունենք հավաստիացումը Աստուծո Որդու և հաշտված ենք Երկնավոր Տիրոջ հետ՝ Հիսուս Քրիստոսով, այլև օտար չենք, այլ ընտանիք Աստուծո: Այդ նա է, որ մեզ ներկայացնելու է Հայր Աստուծո գահի առջև, այսինքն մեզ, որ հավատացել ենք իր Համբարձման հրաշքին և իր պատվիրաններին ու պատվերներին բոլոր (Եբր. Թ 24, Եփես. Բ 18):

Ծնորհներովն համբարձյալ Քրիստոսի շարունակենք գորանալ խորհուրդովն այսօրվա՝ երաշխիքը մեր փրկության:

Միեկի հավատացյալ ժողովուրդ, ի մասնավորի այսօր Հայոց Եկեղեցու համար տարեդարձն է նաև Ամենայն Հայոց Հայրապետության՝ Ս. Էջմիածին վերադարձի, տարեդարձը՝ Կիլիկիայի մայրաքաղաք Սիսի տունդարձի: Ինչպես հայտնի է, 1441 թվականի Համբարձման տոնին, Գլաձորի, Տաթևի և մյուս կենտրոնների երախտավորների ջանքերով, Հայ Եկեղեցու Հայրապետական Աթոռը Նորից վերահաստատվեց Ս. Էջմիածնում՝ Վաղարշապատում:

Այդ, այսօր տոնն է նաև Հայոց Հայրապետության և օրվա կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա-ի, ինչպես մեր բոլոր եկեղեցիներում, ահա և մեր Ժիրակի թեմի եկեղեցիներում էլ կատարվում են աղոթքներ և մաղթանքներ, ինչպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անասանության ու անշարժության համար, այդպես էլ Հայոց Հայրապետի կենաց և քաջառողջության համար:

Իրոք, մեզանից ո՞ւմ հայտնի չէ, որ Ս. Էջմիածինը միշտ էլ՝ «Գերադրական փառքն պերճացեալ լուսատուին հոգաց ներքոց Սրբոյն Գրիգորի առաքելաշնորհ Հայրապետին»՝ լույս երազների մարմնացումն է: Այսօր էլ նա, Ս. Աթոռն այս, իր 16-դարյա պատմությամբ և նավապետությամբ Նորին Վեհափառություն Ս. Ս. Վազգեն Ա-ի, շարունակում է իր Եկեղեցա-պատմական առաքելությունը՝ նաև տիրախնամ մեր թեմում: Եվ մենք բոլորս գիտենք և այսօր նորից ու նոր ուխտով վկայում ենք, թե՛ ընդ հովանյալ ամենազոր Աջույն Աստուծո, և Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Ս. Վազգեն Ա-ի իմաստուն ղեկավարության ներքո Ս. Էջմիածինը շարունակում է իր մեծ և նախախնամական առաքելությունը որպես Աթոռ Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի, որպես տեսանելի, շոշափելի և անսպառ ճառագայթումը Ս. Գրիգոր Լուսավորչի սրտի և հոգու:

Մեր առաջին, վերջին և անսպառ սերն ու նվիրումը Հայ Առաքելական Ս. Եկեղեցուն և նրա նվիրապետական Ս. Աթոռին՝ Էջմիածնին: Հավատարիմ Ս. Համբարձման խորհրդին և միշտ շնորհների տակ Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղի, թող հնչի Քրիստոսի պատգամը. «Ձեզ որք չեմ թողնելու, որովհետև դուք միշտ կենդանի պիտի լինեք»:

Միշտ ու հանապազ, բայց մանավանդ այսօրվա մեր եկեղեցական ջերմ մաղթանքով, աղոթենք Ս. Էջմիածնի հավերժության և անասանության համար, Վեհափառ Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի քաջառողջ և արևշատ օրերի համար: Փա՛ռք Համբարձմանն Քրիստոսի:

Փա՛ռք տեսիլքին մեր պատմության և նույն փառքով իր ապագան կերտող հայրենի մեր երկրին վերածնված, որ թև և թիկունքն է Ս. Էջմիածնի:

«Ծնորհք Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ»:

Ամեն»: